ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍՎԵՐԴԼՈՎ գյուղական համայնքի
2013 – 2016 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Կ. Չերքեզյան
Հաստատվել է համայնքի ավագանու նիստում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1.Համայնքի իրավիճակի գնահատում:
2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3.Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի,նպատակ-
ների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4.Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և
կանխատեսում:
5.Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1. --- Գյուղապետարանի աշխատակազմի և ենթակա
կազմակերպությունների կառուցվածքը:

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է,որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից , քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,ֆինանսական,տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն , որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սվերդլով գյուղը կազմավորվել է մոտավորապես 18- րդ դարի առաջին կեսին: Հիմնադիրները եղել են գյուղից 6 կմ հյուսիս – արևելք գտնվող Դորբանդ կոչվող բնակավայրի բնակիչները:

Գյուղն ավելի հին է,քան ենթադրվում է,ինչի մասին խոսում է գյուղի կենտրոնում տուֆից և բազալտից V–VII դարերում կերտված,լավ պահպանված Ս.Գևորգ եկեղեցին:Այն գտնվում է ծովի մակարդակից 1480 մ բարձրության վրա:Գյուղի տարածքում են գտնվում Ս.Գևորգ մատուռը և Ս.Գևորգ եկեղեցին՝ կառուցված V - VIII դարերում, սրբատաշ սև տուֆից և տեղական բազալտից,որը վերանորոգվել է 80 – ական թվականներին:

Գյուղի միջով հոսում է Միսխանա գետը:

Գյուղի բնակչությունը միատարր է:

Խմելու ջրով գյուղն ապահովված է , 40 %-ով:

Գյուղի կլիման. Ձմեռը ցրտաշունչ է, ամառը զով, հաճախակի տեղումներով, նաև կարկուտով:Անձրևային տարիներին հաջորդում են երաշտի տարիները, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության վրա:

Գյուղամերձ խոտհարքները և արոտավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 1900-2400 մ բարդրության սահմաններում,անտառային ենթալպյան և ալպյան գոտիներում՝ մեղմ միջակ թեք լանջերում,որը բարենպաստ է անասնապահության զարգացման համար:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 1134 բնակիչներ ,որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 54 % -ը:Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ(0- 6 տ.) -- 83
2. Դպրոցական(7- 17 տ.) -- 153
3. 18-62 տարեկան -- 779
4. Թոշակառուներ -- 145
5. Հաշմանդամներ -- 8
6. Աշխատունակներ -- 585

Գյուղն ունի 320 ծուխ,որոնցից 67 -ը ընդգրկված են <<Փարոս>> համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի / գյուղապետի / կողմից,որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

- տեղակալ -- 1 դրույք
- համայնքի ծառայության առաջատար պաշտոն 1-ին ենթ.գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար -- 1 դրույք
- համայնքային ծառայության կրտսեր պաշտ. 1-ին ենթ.գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ հաշվապահ -- 1 դրույք
- համայնքային ծառայության կրտսեր պաշտ. 2 –րդ ենթ.գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ -- 2 դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 6 հոգուց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ. թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով .

- վարչական շենք -- 1 միավոր
- բուժկետ -- 1 միավոր
- շինություններ -- 4
- ջրմուղի ցանց -- 3 կմ
- գազի ցանց -- 6,3 կմ
- գյուղ.տեխնիկա և գործիքներ -- 58 միավոր

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի:Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել մոտ 12 կմ ճանապարհ և փողոց:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 256 առանձնատուն, 30,7 հազ.քառ.մ տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվ 20 -ից ավել է, որը տարեցտարի աճում է :

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տաչածքը -- 3346,19 հա,որից՝

- վարելահողեր -- 662,73 հա
- խոտհարք -- 751,51 հա
- արոտավայրեր -- 1234,61 հա
- անօգտագործելի հողեր -- 169,62 հա
- ձորեր -- 70,5 հա
- դաշտային ճանապարհներ -- 26,6
- արտադրական մաս/ կովանոց / -- 21,5 հա
- գերեզմանոց -- 5,0 հա
- տնամերձ հողեր -- 82,32 հա
- դպրոց -- 2,5 հա
- հուշարձան -- 0,2 հա
- ջրերի տակ -- 13,67 հա
- գյուղամիջյան փողոցներ -- 22,9 հա
- սրբավայր եկեղեցի -- 0,2 հա
- անտառ -- 263,93 հա
- դաշտային անտառաշերտ -- 9,4 հա
- պետ.խճուղի -- 9,0 հա
- սեփականաշնորհված հողեր -- 1035,14 հա

  մեկ հողաբաժնի չափը -- 2,7 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 60-70% -ը:
Խիստ անձրևային տարիներին ևս բերքի մեծ կորուստներ են լինում:Այս արտադրությունը լիովին կախված է բնության քմահաճույքներից:
Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ,միս ,բուրդ,ձու, մեղր:Կերային բազայի ապահովման համար այս բնագավառն ունի լավ հեռանկարներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց,որը գտնվում է բարվոք վիճակում,որտեղ սովորում են 131 աշակերտ:Դպրոցն ունի 27 աշխատատեղ ,մեկ ուսուցչին ընկնում է 10 աշակերտ:

ՄՇԱԿՈՒՅԹ,ՍՊՈՐՏ,ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի մշակույթի տուն,որի պատճառով զրկված է հասարակական միջոցառումներից (կինոյից,թատրոնից):
Գրադարանը տեղավորված է գյուղապետարանի շենքում,ունի 8178 անուն գիրք:
Գյուղն ունի ֆուդբոլի դաշտ,որտեղ մարզվում են տարբեր տարիքային խմբի թիմեր:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բժշկական ամբուլատորիա:Շենքը լավ վիճակում է,սակայն չկա համապատասխան գույք և սարքավորում :Բուժկետն ունի 1 աշխատող:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Մեծ աշխատուժի առկայություն
- ✓ Խմելու և ոռոգման ջրի մեծ պաշարներ
- ✓ Ուղղակի ընտրություններով համայքի ղեկավարի ընտրության հնարավորություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- ✓ Ծնելիության նվազեցում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
- ✓ Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
- ✓ Գործազրկությունը
- ✓ Վթարային տների առկայությունը
- ✓ Խոտհարքի բացակայությունը
- ✓ Անբարենպաստ կլիմայական պայմանները
- ✓ Խմելու ջրի ոչ շուրջօրյա մատակարարումը
- ✓ Մշակույթի կենտրոնի բացակայությունը
- ✓ Ազգաբնակչության եկամուտների նվազում,որն ազդում է համայնքի բյուջեի կատարմանը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- ✓ Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի կառուցման անհրաժեշտությունը:
- ✓ Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը
- ✓ Կրթական համակարգում անհապաղ բարեփոխումներ մտցնելու անհրաժեշտությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.Խմելու ջուր
2.Մշակույթի կենտրոն
3.Գյուղամիջյան ճանապարհներ
4.Փողոցների լուսավորություն
5.Դպրոցի վերանորոգում
6.Գերեզմանների ցանկապատում
7.Եկեղեցիների,մատուռների պահպանում:
8. Մանկապարտեզի բացակայություն

Ռազմավարությունը

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել նպատակներին՝

- ✓ Զարգացնել գյուղատնեսությունն ու անասնապահությունը համայնքում
- ✓ Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով
- ✓ Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին
- ✓ Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը
- ✓ Համայնքի առողջապահական խնդիրների բարելավում:

2.ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նպատակը

Համայնքի բնակչությանը ապահովել շուրջօրյա խմելու ջրով:

Խնդիրներ

- ✓ Կնքել պայմանագիր <<Սոցիալական ներդրումների հիմնադրամի>> հետ, որի համաձայն ,ծրագրով պահանջվող գումարի 90%-ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10%-ը՝ համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 2

ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Նպատակ

Գյուղամիջյան ճանապարհներ

Խնդիրներ

- ✓ Գտնել դոնոր ընկերություններ ճանապարհների վերակառուցման համար:

ԾՐԱԳԻՐ 3

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նպատակնեն են՝

Մինչև 2014թ. Տարեվերջ վերսկսել նախկին մանկապարտեզի կիսակառույց շենքի շինարարական աշխատանքները և վերակառուցել այն որպես մշակույթի տուն:Այդ նպատակով դիմել <<Հայաստանի սոցիալական հիմնադրամ>>:

ԾՐԱԳԻՐ 4
ԿԱԹԻ ՎԵՐԱՆՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- ✓ Ապահովել գյուղամթերքների իրացում ու աշխատատեղերի ստեղծում:

Խնդիր -1

- ✓ Մինչև 2014 թ. Տարեվերջ ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ կաթի վերամշակման արտադրամաս հիմնելու համար:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 5
ԽՈՇՈՐ ԵՂՋՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՑԵՂԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ՝ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ՆՊԱՏԱԿ

Բարձրացնել անասունների մթերատվությունը և անասնապահության արդյունավետությունը:

ԽՆԴԻՐ – 1

- ✓ Կազմակերպել համայնքի խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորման գործընթացը:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԽՆԴԻՐ – 2

- ✓ Մինչև 2014թ. ապրիլ ամիսը ապահովել բարձր բերքատվության կերային մշակաբույսերի սերմացուի ձեռքբերումը:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 6
ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐ

Բարեկեցիկ և լուսավոր դարձնել փողոցները գիշերային ժամերին:

ՆՊԱՏԱԿ

- ✓ Գտնել դոնոր ընկերություններ ճանապարհների վերակառուցման համար:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 7
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԽՆԴԻՐ

Բացել մանկապարտեզ:

ՆՊԱՏԱԿ

- ✓ ՈՒնենալով մանկապարտեզ , կբացվեն նոր աշխատատեղեր և երեխաների համար կապահովվի բարեկեցիկ մանկություն:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 8
ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ

ԽՆԴԻՐ

ՈՒնենալ ցանկապատված գերեզմանոց:

ՆՊԱՏԱԿ

- ✓ Գերեզմանների ցանկապատման հետևանքով այդ տարածքը չի վնասվի:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 9
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ,ՄԱՏՈՒՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԽՆԴԻՐ

- ✓ Բարեկարգել և վերանորոգել և պահպանել եկեղեցիները:

ՆՊԱՏԱԿ

- ✓ Բազմադարյա հնությունների պահպանում :

Պատասխանատու՝ համանյքի ղեկավար:

ԾՐԱԳԻՐ 10
ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԽՆԴԻՐ

Վերանորոգել դպրոցը:

ՆՊԱՏԱԿ

- ✓ Աշակերտների և ուսուցիչների համար ապահովել 21-րդ դարին համապատասխան ուսումնական հաստատություն:

Պատասխանատու՝համայնքի ղեկավար:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հ Հ	Ցուցանիշներ	Չափի միավ.	2009 կանխ.	2010 կանխ.	2011 կանխ.	2012 կանխ.	2013 կանխ.	2014 կանխ.	2015 կանխ.	2016 կանխ.
	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Համայնքի տարածքը	հա	3346,19	3346,19	3346,19	3346,19	3346,19	3346,19	3346,19	3346,19
2	Բնակչության թիվը	մարդ	1128	1113	1118	1134	1140	1150	1160	1170
3	Ծնունդը	մարդ	12	14	16	15	20	25	30	35
4	Մահացությունը	մարդ	12	7	9	7	9	9	9	9
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում ա/ զբաղվածներն ըստ տնտ.ճյուղերի	մարդ	520	520	520	512	530	550	575	600
6	Գործազրկության մակարդակը	%								
7	Առևտրի և հաս.սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	5	5	5	5	6	6
8	Պահուստային հողեր	հա	104,7	104,7	104,7	104,7	104,7	104,7	104,7	104,7
9	Պահ. հողերի օգտ. մակարդակը	%	60-70	60-70	70-80	70-80	80	85	90	95
10	Խմելու ջրի ներհամ. ցանցի երկարությունը	կմ	8	8	8	8	9	10	11	12
11	Ներհամ. ոռոգմոն ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-	-	-	-
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	-	-	-	-	-	-	-	-
13	Չբարեկարգված փողոցների և ճանապ. երկարությունը	կմ	12	12	12	12	12	12	12	12
14	Ներհամ.փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	12	12	12	12	12	12	12	12
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.քմ	30,7	30,7	30,7	30,7	30,7	30,7	30,7	30,7
16	Բնակկարիքավոր ընտանիքների թիվը	հատ	18	18	21	25	30	35	40	45
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ /օր	20	20	20	30	30	40	50	60
18	Ջրի կորուստները ցանցում	%								
19	Հանրակրթ. դպրոցում սովորողների թիվը	մարդ	124	126	130	131	131	135	135	140
20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	-	-	-	20	20	22	25	30
21	Գ /պ և ենթակառուց. աշխատողների թիվը	մարդ	8	8	8	6	6	7	7	7

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը -- 320 այդ թվում՝

2.Գյուղ.արտադրանքի՝ հիմնական տեսակների արտադրությունը, ց

ա. ցորեն	-- 13,8 ց / հա
բ. գարի	-- 6,0 ց /հա
գ. կարտոֆիլ	-- 150 ց / հա
դ. կաղամբ	-- 180 ց / հա
ե. բանջարաբոստ. կուլտուրա	--
զ. կաթ	-- 10 ց /գլուխ
է. միս	-- 100 ց
ը. բուրդ	-- 0,02 ց / գլուխ
թ. ձու	--
ժ. մեղր	-- 0,1 ց /փեթակ

3. Ցանքատարածությունները

ա. հացահատիկ	-- 148,0 հա
բ. կարտոֆիլ	-- 40,0 հա
գ. բանջարաբոստ .կուլտուրա	--
դ. կաղամբ	-- 3,0 հա
ե. առվույտ	-- 6,0 հա
զ. կորնգան	--
է. միամյա խոտեր	--

4. Անասնագլխաքանակը,գլուխ

ա. խոշոր եղջեր.անասուններ,	-- 1069
այդ թվում՝ կովեր	-- 536
բ. մանր եղջեր.անասուններ,	-- 676
այդ թվում՝ մայրեր	--616
գ. խոզեր	--107
դ. թռչուններ	-- 1144
այդ թվում՝ հավեր	--1021
ե. մեղվաընտանիքներ	-- 273

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը,հատ այդ թվում՝

ա.համայնքային սեփականություն	բ. մասնավոր սեփականության	
թրթռուռավոր տրակտոր- 1	թրթռուռավոր տրակտոր	-- 4
անիվավոր տրակտոր	անիվավոր տրակտոր	-- 19
հացահատիկային կոմբայն	հացահատիկային կոմբայն	-- 4
խոտհնձիչ կոմբայն	խոտհնձիչ կոմբայն	-- 1
բեռն.ա/մ տարբեր մակնիշի	բեռն. ա/ մ տարբեր մակնիշի	-- 14
տրակտորային կցասայլեր	տրակտորային կցասայլեր	-- 11
գութաններ	գութաններ	-- 7
կուլտիվատորներ	կուլտիվատորներ	-- 2
շարքացաններ	շարքացաններ	-- 2
խոտ հակավորող մեքենաներ	խոտ հակավորող մեքենաներ	--
պարարտանյութ ցրիչ	պարարտանյութ ցրիչ	--
հատիկաղաց	հատիկաղաց	-- 1

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Սվերդլովի գյուղապետարանի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը